EXPORT
INSURANCE AGENCY
OF ARMENIA

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՑ ՌԻՍԿԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

Հոկտեմբեր 2023

ԻՆՉ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ԲԱՑՈՒՄ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

- Միջազգային շուկաներում ապահով գործարքների կատարում՝ արտահանողներին պաշտպանելով օտարերկրյա գնորդի չվճարման ռիսկից
- Առևտրի անգրավ ֆինանսավորման հասանելիություն և դրամական հոսքերի բարելավում
- Մրցակցային առավելությունների ձեռքբերում, վաճառքների ծավալների աճ և դեպի նոր շուկաներ մուտքի առաջխաղացում՝ գնորդներին հետաձգված վճարման պայման առաջարկելու միջոցով
- Նոր շուկաներում և օտարերկրյա նոր գնորդների հետ աշխատելու համար վստահության միջավայրի ձևավորում

ԻՆՉ ՌԻՍԿԵՐ Է ԾԱԾԿՈՒՄ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1 Առևտրային ռիսկեր

- Օտարերկրյա գնորդի սնանկություն, անվճարունակություն
- Օտարերկրյա գնորդի հրաժարում վճարում կատարելուց առանց որևէ իրավական հիմքի

2 Քաղաքական ռիսկեր

- Վարչական որոշումներ, իրավական ակտեր, որոնք հանգեցրել են վճարման կամ արտարժույթի փոխանակման անհնարինության
- Քաղաքական իրադարձություններ և բնական աղետներ, որոնք հանգեցրել են վճարման սահմանափակումների կամ անհնարինության

ՈՐՊԻՆՔ ԵՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- Ապահովագրության ժամկետ՝ մինչև 2 տարի (համընկնում է պայմանագրով նախատեսված գնորդի կողմից հետաձգված վճարման ժամկետների հետ)
- Սպասման ժամանակահատված*՝ 1 - 6 ամիս
- Չհատուցվող գումար*՝ 5% - 25%
- Ապահովագրավճար՝ հաշվարկվում է ապահովագրական գումարի նկատմամբ կիրառելով ապահովագրական սակագինը
- Ապահովագրական սակագին*՝ 0.55% - 1.9%

*Ապահովագրության պայմանները որոշվում են հիմք ընդունելով օտարերկրյա գնորդի ֆինանսական դրությունը, արտահանողի և օտարերկրյա գնորդի համագործակցության պատմությունը, օտարերկրյա գնորդի երկրի ռիսկայնության դասը և այլն:

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԻՆՉ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՈՒՆԸ

Ապահովագրության վկայագրի միջոցով արտահանողները հնարավորություն են ստանում առավել բարենպաստ պայմաններով՝ առանց գրավի պայմանի, օգտվել ՀՀ բանկերի և/կամ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող շրջանառու կապիտալի ֆինանսավորման պրոդուկտներից (կարճաժամկետ վարկ, ֆակտորինգ):

ԻՆՉ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՍՏԱՆՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԳՆՈՐԴՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

- Մատակարարված ապրանքի դիմաց ավելի ուշ վճարելու հնարավորություն
- Դրամական հոսքերի բարելավում և հետևաբար բանկերից ֆինանսավորում ստանալու անհրաժեշտության բացակայություն

ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ծրջանառու կապիտալի համալրում անմիջապես արտահանումից հետո
- Դրամական հոսքերի արդյունավետ կառավարում
- Ֆինանսավորումը կարող է տրամադրվել ինչպես պայմանագրի արժույթով, այնպես էլ այլ արժույթներով՝ հնարավորություն ընձեռելով չեզոքացնել փոխարժեքի տատանումներից հնարավոր կորուստները

ԻՆՉՊԵՍ Է ԳՈՐԾՈՒՄ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ